Համազասպ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՀԱՅԿԱՁՈՐԻ ՔԱՐԱՆՁԱՎԱՅԻՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 2005 թ. ՊԵՂՈՒՄՆԵՐԸ

Հայկաձորի քարանձավային բնակավայրի 2005 թվականի պեղումները շարունակվեցին Ֆրանսահայ բարեբարներ տեր և տիկին Թերզյանների հատկացրած միջոցներով: Շիրակի երկրագիտական թանգարանի հնագիտական արշավախմբի 2005 թվականի աշխատանքների հիմնական խնդիրներն էին՝

ա) Լիովին ավարտել թիվ 1 քարանձավի առաջին հարկի II սրահի ներքույթի պեղումները՝ տեղանքի շերտագրական պատկերն ունենալու և դրա հարաբերակցությունը շինարարական հորիզոնների հետ կապելու նպատակով արտաքին կողմում թողնելով մոտ 1,5 մ լայնքով հատված:

բ) Տեղանքի միջնադարյան պատկերը վերականգնելու նպատակով շարունակել թիվ 1 քարանձավի առաջին հարկի I, II և III սրահների դիմացի հարթակի պեղումները:

գ) Քանի որ նախորդ տարում արդեն պեղվել էր թիվ 1 համալիրին հարավից հարող թիվ 4 քարանձավը, կից քարանձավների հարաբերակցությունը պարզելու և տվյալ հատվածի ամբողջական պատկերն ունենալու նպատակով խնդիր դրվեց պեղել նաև նշված համալիրին հյուսիսից հարող հատվածը (չափագրություն 1,2):

II սրահի պեղումների ընթացքում հեռացված շերտի տակից հայտնաբերվեցին երկու թոնիր և մեկ վառարան: Բացվեց քարանձավը արտաքին կողմից անջրպետող պատը: Այն հավանաբար երկրաշարժի ընթացքում փլուզվել էր և ներսի կողմից ամրացվել ավելի ցածր և անորակ շարված մի այլ պատով: Նույն պատակերը բացվեց նաև արտաքին կողմում՝ հարթակի վրա: Այստեղ թափված ժայռաբեկորների վրա կամ դրանց օգտագործմամբ կառուցվել էին նոր պատեր: Ուշ կառուցված պատերից մեկի տակ տեսանելի էր ևս մեկ լցված թոնիր: Չափագրելուց հետո՝ այս պատերը հեռացնելու ընթացքում թոնիրի մոտից հայտնաբերվեց քառանկյուն մեծ ձիթաճրագ (նկ.1): Նման ճրագները մեծ տարածում ունեին X-XIII դդ.: Այս ճրագի, ինչպես նաև նույն շերտից գտնված այլ նյութերի թվագրությունից կարելի է եզրակացնել, որ վերջին մեծ փլուզումը Անիի 1319թ. ավերիչ երկրաշարժի հետևանք է:

I, II, III սրահների դիմաց պեղումներով վերականգնվեց նախկին ռելիեֆը: Այստեղ բնական ավազաքարը տաշելու միջոցով քարանձավների բնակեցման ժամանակաշրջանում պատրաստված էր հորիզոնական հարթակ, որի վրա պեղումներով բացվեցին վաղ ժամանակաշրջանի պատեր, թոնիր, հալոցքի վառարան և ավազաքարի մեջ փորված ցորենի 3 ամբարներ: Վաղ շրջանի պատերի մնացորդները քարանձավներից ձգվում են դեպի գետը և իրենց մեջ ներառում են քարանձավների գծին զուգահեռ փորված երեք ամբարներ: Ընդհանուր պատկերն այնպիսին է, որ քարանձավներին հարող հարթակը ամբողջությամբ ծածկված է եղել, այլապես թոնիրները, ամբարները և դեպի I և II սրահներ ձգվող միջանցքը կհայտնվեին բաց երկնքի տակ: Հարթ հորիզոնական հարթակն ամբարներից հետո ձգվում է մոտ 1,5-2մ, այնուհետև, ինչպես ցույց տվեց I սրահի դիմաց արված հետախուզական փոսորակը, ավազաքարը մոտ 1,3մ ուղղահայաց կտրված է, և այդ մակարդակից սկսվում է մեկ այլ հորիզոնական մակերես: Չնայած բացվեց մի փոքր հատված, սակայն արդեն իսկ տեսանելի է, որ լանջը գետից մինչև քարանձավները արհեստականորեն վերածվել է աստիճանաձև բարձրացող մի քանի հարթակների: I, II, III սրահների դիմացի հարթակի պեղումներով հստակորեն պարզվեց համալիրի նախնական կառուցվածքը, դրա առանձին մասերի տնտեսական բնույթը: Մեր կարծիքով, թիվ 1 ձեռակերտ քարանձավը հիմնականում ծառայել է որպես բնակարան, իսկ նրա առաջին հարկում գտնվող I, II, III սրահները և ծածկված հարթակը ունեցել են տնտեսական բնույթ:

Ելնելով Շիրակի բնակլիմայական պայմաններից՝ կարելի է ենթադրել, որ ձեռակերտ քարանձավը հիմնականում օգտագործվել է ձմռանը, իսկ տարվա տաք շրջանում տնտեսական և կենցաղային հիմնական գործառույթները կրել են I, II սրահները և հարթակը:



Հօգուտ այս վարկածի են խոսում ձեռակերտ քարանձավում հայտնաբերված երկու՝ մեծ և փոքր թոնիրները: Ինչպես ցույց են տալիս եռամյա պեղումների արդյունքները՝ I և II սրահներն օգտագործվել են կենցաղային կարիքների և հացաթխման համար, III սրահը ծառայել է որպես անասնագոմ, ծածկված հարթակը, ըստ այստեղ հայտնաբերված հալոցքի վառարանով, ցորենի ամբարներով և այլն, ունեցել է արտադրական, մթերքների պահեստավորման և այլ կենցաղային գործառույթներ: Ուշադրության է արժանի ամբարների առկայությունը: Դրանք ունեն հատած կոնի ձև: Առաջինն ունի 1,9մ խորություն, հիմքի տրամագիծը մոտ 2մ, բերանի բացվածքը՝ 0,55մ, երկրորդը՝ համապատասխանաբար 1,35մ x 1,4մ x 0,5մ, երրորդը՝ 1,6մ x 2,15մ x 0,57մ չափեր: II և III ամբարներն իրար հաղորդակից են և ունեն միջանցիկ անցք, որով փոքր ամբարում պակասելու ընթացքում ցորենը համեմատաբար մեծ ամբարից ինքնահոս տորացել է և լրացրել պակասը: Այսինքն՝ մեծ ամբարը հաճախակի բացելու անհրաժեշտություն չի եղել: Առաջին ամբարը, որ կից ամբարներից փոքր ինչ հեռու է, հնարավոր է, ծառայել է գարի պահեստավորելու համար: Այս ամբարների վաղ լինելը ապացուցվում է նրանով, որ III ամբարի վրա ընկած էր փլուզման հետևանքով միակտուր ժայռից պոկված տուֆի հսկայական մի բեկոր, որի վերին մասը հետագայում մշակվել է. փորվել են պարան կապելու անցքեր: Ամբարի մեջ մնացել էին 3 տարբեր չափի կճուճներ:

2005թ. աշխատանքներ ծավալվեցին թիվ 1 քարանձավի՝ հյուսիսից հարող հատվածում: Սկզբում մաքրվեց թիվ 1 և 2 քարանձավների միջանկյալ հատվածը: Լցված հողի շերտը հասնում էր մինչև թիվ 1 քարանձավի երկրորդ պատուհանի եզրը՝ միանալով ժայռաբեկորի վրա երևացող միագիծ փոքր փորվածքներին:Նախորդ հատվածների պեղումներից արդեն ունեինք ծածկի համար արված նմանատիպ փոսորակներ, և ենթադրվում էր, որ այստեղ ևս նույն պատկերն ենք ունենալու: Առաջին շերտը հեռացնելուց հետո պարզվեց, որ հողածածկույթի տակ մնացած հատվածում՝ պատի վրա, քիչ կորագծով արված են իրարից 20-30 սմ հեռավորությամբ փորվածքներ, որոնք համապատասխան անցքեր ունեն մայր ժայռից պոկված հանդիպակաց հսկա ժայռակտորի վրա: Սա յուրահատուկ լուծում է՝ մասամբ փլուզված քարանձավները վերստին գործածական դարձնելու համար: Ժայռերի միջև տարածքն օգտագործել են վերակառուցման ժամանակ՝ ծածկի գերաններ դնելու համար: Քարանձավի պատի և այս ժայռաբեկորի միջև բացվեցին նաև XIդ. վերակառուցված երկու պատեր: Երկրորդ պատի մեջ դրված ուղղանկյուն բուխարու դիմաց հատակին գտնվեցին բյուզանդական երկու պղնձեղրամներ: Պատերի խորությունը և ֆունկցիոնալ ու ժամանակագրական կապը կպարզվի հաջորդ շերտերը բացելուց հետո: Այն, որ պատերը տարաժամանակյա են, հուշում է նաև իրար այդքան մոտ դրված լինելու փաստից:



Պեղումները շարունակվեցին պոկված ժայռակտորի և քարանձավի միջև ընկած հատվածում: Այստեղ՝ սրբավայրի և նրանից աջ գտնվող քարանձավի արանքում, բացվեց կամարաձև մուտքով սրան միացած մեկ այլ քարանձավ: Այս քարանձավի (թիվ 5) մի մասը միայն պեղվեց: Քարանձավը խորշով բաժանված է երկու մասի: Ի տարբերություն մյուս քարանձավների, այստեղ առաստաղը ռոմբաձև նախշազարդված է: Հատակին և պատերին բացվեցին քազմաթիվ խորշեր, օջախներ, ինչպես նաև, պատի մի անկյունում կիտված կավի զանգվածներ: Հատակի քարի շերտի մեջ փորված երկու ակով հորանման փոսը ենթադրել է տալիս այս քարանձավի նախապես արհեստանոց լինելը: Վերակառուցումների ժամանակ դրված պատերը, ինչպես նաև ընկած հսկա ժայռաբեկորները մասամբ փակել են փոսը: Հետագա պեղումները հնարավորություն կտան պարզելու փոսի նշանակությունը: Քարանձավում պահպանված են շինարարական հինգ հորիզոնների պատեր: Գտածոները, որ հիմնականում խեցեղեն են և մետաղյա իրեր, վերաբերում են X-XIVդդ.:

Երկու քարանձավները միացնելու նպատակով հեռացվեցին փլվածքի հետևանքով սրբավայրից աջ գտնվող քարանձավի մուտքը փակող և ներսը լցված բազալտի և տուֆի հսկա բեկորները: Պեղվեց քարանձավի միայն ձախ թևը, քանի որ աջ կողմը առավել փլված է, և հսկա քարերը հնարավոր չէ հեռացնել: Այստեղ բացվեցին պատերի մեջ և պատերի վրա արված խորշեր, հատակների վրա՝ օջախներ, թոնիրներ, տնտեսական ամբարներ, որոնք վերաբերում են X-XIդդ.: Թոնրի ակի մեջ գտնվեց Անիի քաղաքային դրամ:

Պեղվեց նաև այս քարանձավների դիմացի հարթակը: Բացվեցին շինարարական տարբեր հորիզոնների վերաբերող պատեր: Ինչպես պարզվեց, այստեղ ևս վերակառուցման մի քանի փուլ է եղել՝ կապված երկրաշարժերի ժամանակ հսկա քարաժայռերի՝ քարանձավի հարթակի վրա ընկնելու հետ:

ՀԱՅԿԱՁՈՐ, ՔԱՐԱՆՁԱՎԱՅԻՆ ԲՆԱԿԱՎԱՅՐ

քարանձավ-5,

հարթակի կտրվածք



Չկարողանալով հեռացնել ընկած ժայռերը, կտրել են որոշ հատվածներ, ապա հարթեցրել, դարձնելով հատակ, պատեր դրել և վերաշինել են արդեն նոր կառույցի ձևով: Այստեղ, հարթակի վրա գտնվեց վերջին փլուզման տակ մնացած կանացիակերպ աղաման, որ վերաբերում է XIII-XIVդդ. (նկ. 1): Իսկ քիչ ներքև՝ կանգուն մնացած պատի հիմքի տակ, մոտ 0,6 մ ավելի խորքում, մեկ այլ նման հարթակի վրա, հատակին փորված փոսի մեջ գտնվեց ամբողջական մի կարաս, կային նաև փշրված տարբեր կարասների բեկորներ, որոնք արդեն վերաբերում են XI-XIIդդ. (չափագրություն 3):

Հայկաձորի 2005թ. պեղումները խիստ աշխատատար էին: Տարբեր փլուզումների հետևանքով թափված տուֆի և բազալտի հսկա ժայռաբեկորների հեռացման միակ հնարավորությունը տեխնիկական միջոցների կիրառման անհնարինության պատճառով դրանք՝ ձեռքի գործիքներով ջարդոտելն էր: Գտածոները բազմազան են. բյուզանդական և արաբական պղնձեդրամներ, խոհանոցային ամենօրյա օգտագործման կճուճներ, պուտուկներ, գավեր, թասեր, քառանկյուն (նկ. 2) և բլթակավոր ճրագներ, ջնարակած բարձրորակ անոթների բեկորներ, նաև մետաղյա իրեր, ապակու բեկորներ, խարամներ և այլն: Առանձնահատուկ ուշադրության է արժանի միջնադարյան աղամանի գյուտը, որն առայժմ միակն է Հայաստանում և ապացուցում է XIX-XXդդ. հայկական կանացիակերպ աղամանների բուն հայկական ծագումնաբանությունը: Աղամանը բաց շագանակագույն, ավազախառն կավից է (բարձրությունը՝ 38սմ, իրանի

տրամագիծը՝ 25,5սմ, ներքևինը՝ 11,5 սմ): Երկթեք իրանն ավարտվում է նեղ վզի վրա նստած, բարակ շուրթով և ոչ խորը թաս-ճրագաթաթով: Ունեցել է իրանից վզին միացող հակադիր, աղեղնաձև զույգ ունկեր, որոնցից մեկն է պահպանվել: Ամենալայն մասում ունի կլոր բացվածք (պտղաբերման օրգանը՝ կտեիս), զարդարված է վերադիր նախշերով, որոնք զբաղեցնում են բացվածքի երկու կողմերը՝ ավարտվելով ճրագաթաթի տակ: Պատկերված են շուրջպար բռնած վեց մարդ: Բոլորը, բացի ամենափոքրից, գլխից վեր ունեն լուսապսակ հիշեցնող, աղեղի բարակող ծայրերով պայտաձև դետալ: Աղամանի տարբեր մասերում՝ ունկի վրա և վզի տակ, կան օձերի մի քանի վերադիր գալարներ:





Եզակի գտածոների շարքին կարելի է դասել II սրահի մեծ թոնիրի մոխրի միջից գտնված ծալծըլված և այրված լավաշի մնացորդները, ինչպես նաև դրոշմազարդ խեցեղենի բեկորները:

Ինչպես ցույց տվեցին Հայկաձորի 2005թ. պեղումները, քարանձավային բնակավայրն ընդգրկել է ոչ միայն բնական և ձեռակերտ քարանձավները, այլ նաև ծավալվել է դեպի արևելք՝ ներառելով քարանձավների դիմացի հարթակները: Վերջիններս կառուցվել են աստիճանաբար ցած իջնող որոշակի համակարգով՝ հավանաբար հասնելով Ախուրյանի ափը:

Պեղումների արդյունքում խոշոր փլուզումների և հետագա վերակառուցումների տեսքով բացվեցին Անիի բոլոր 3 մեծ երկրաշարժերի հետևանքները: Ընդհանուր պատկերը ապացուցում է, որ կյանքն Անիում, գոնե նրա արվարձաններում, չի դադարել և շարունակվել է մինչև ուշ միջնադար: Հուշարձանախումբը մանրամասն նկարագրվել է, կատարվել են չափագրական, լուսանկարչական աշխատանքներ: Հայտնաբերված նյութերը ենթարկվել են կամերալ մշակման, կոնսերվացվել կամ վերականգնվել են:

РАСКОПКИ ПЕЩЕРНОГО ПОСЕЛЕНИЯ АЙКАДЗОРА В 2005 г.

___ *Резюме* ___ ___ *А. Хачатрян* ___

В 2005 археологическая экспедиция продолжила раскопки пещерного пригорода Ани близ села Айкадзор. Основные работы проводились на противоположной от двухэтажного пещерного комплекса 1 террасе и на северной стороне. На террасе обнаружены некоторые поздние перестройки и выкопанные в слое песчанника три амбара для зерна первого периода. На северной стороне по соседству со святилищем (пещера 2) обнаружена большая пещера (5), состоящая из двух помещений. В результате раскопок выяснилось что культурный слой террасы напротив этой пещеры составляет более 3 м. Были обнаружены железные и каменные орудия труда, кухонная керамика, в том числе фрагменты глазурированной, со штампованными узорами и расписной керамики.

Особый интерес представляют медные и серебряные монеты монгольской и византинской чеканки, большая антропоморфная солонка с барельефным изображением танцующих в круговом танце 6 человеческих фигур, фрагменты обгорелого хлеба лаваш. Находка высшеупомянутой солонки (пока единственная из средневековья) доказывает местное происхождение широких распространенных в 19-20 веках подобных солонок.